Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ռուզաննա Պիպոյան, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դրպոց» ՊՈԱԿ-ի տնօրեն

2. Գործուղման վայրը և ժամկետները

Էստոնիայի հանրապետություն, քաղաք Տալլին, 16.11.2025-20.11.2025 թ.

3. Հրավիրող կողմը

Էստոնիայի Հանրապետության կրթական գիտությունների ինստիտուտ և Տալլինի համալսարան

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Ուսումնասիրել Էստոնիայի կրթական համակարգի փորձը, դպրոցական մշակույթը, առաջնորդության մոդելները և ուսուցման բարելավման մեխանիզմները՝ Հայաստանի կրթական ռազմավարության իրականացման աջակցման համար, ինչպես նաև կրթական բարեփոխումների պլանավորման հմտությունների զարգացմանը և փորձի փոխանակմանը:

5. Քննարկված թեմաները

17 նոյեմբերի – Ուսուցման մոտիվացիա

- Արտաքին և ներքին մոտիվացիայի առանձնահատկություններ
- Սովորողների մոտիվացիայի բարձրացման գործիքակազմ

18 նոյեմբերի – Արժեհամակարգային առաջնորդություն և համագործակցային մշակույթ

- Դպրոցի ղեկավարության գործընթացներ
- Ուսուցիչների համագործակցություն
- Աշակերտի ինքնավարության ամրապնդում
- Դպրոցում կիրառվող նորարարական մոտեցումներ

19 նոյեմբերի – Տվյալների օգտագործում դպրոցների ղեկավարության շրջանում

- Տվյալահեն որոշումների ընդունում
- Դասարանի դիտարկում և վերլուծություն

- Ուսուցիչների շարունակական ուսուցում, ինքնակրթություն
- Աշակերտները որպես ինքնուրույն սովորողներ

20 նոյեմբերի – Անցում լիարժեք էստոներեն ուսուցման

- Կրթական քաղաքական փոփոխություն (2024/25 թվականներից)
- Դպրոցի փորձը, մարտահրավերներն ու լուծումները
- Դասերի դիտարկում և սովորողի լեզվական միջավայրի գնահատում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հետևյալ մասնագետների հետ.

- **Պրոֆ. Եվե Այզենշմիդտ** – կրթական առաջնորդություն
- **Ջոսեպ Նորմա** – հետազոտող, մոտիվացիայի ուսումնասիրություն
- **Մարի-Լիիս Սուլթս** – Տալլինի արվեստի գիմնազիայի տնօրեն
- **Ռիինա Ստալ** – ծրագրի կազմակերպիչ
- **Տիինա Տիիտ**, **Ռաիդո Մարմոր** – տնօրենի տեղակալներ, տվյալահեն կառավարման մասնագետներ
- **Կարեն Սուքիասյան** – Տալլինի հումանիտար դպրոցի տնօրեն (էստոներեն լեզվին անցումի փորձ)

Քննարկված հարցեր

- Ինչպես ձևավորել համագործակցային դպրոցական մշակույթ
- Ինչպիսի հարթակներով կարող է զարգանալ ուսուցիչների մասնագիտական ուսուցումը
- Ինչ գործիքներ կարելի է օգտագործել դասի դիտարկման և հետադարձ կապի համար
- Աշակերտի ինքնավարություն՝ որպես կրթական արդյունքի ազդակիր
- Էստոներեն լեզվին անցնելու արդյունավետ կազմակերպում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- Պայմանավորվածություն՝ շարունակել համագործակցությունը և փորձի փոխանակումը Tallinna Kunstigümnaasium-ի և Pelgulinna Gymnasium-ի հետ:
- Համաձայնություն՝ մշակել համատեղ վերապատրաստման ծրագրեր և դիտարկել ուսուցիչների համագործակցության մոդելների ներդրման հնարավորությունները Հայաստանում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- **Սովորողակենտրոն մոտեցումների ներդրում՝** կիրառել Էստոնիայի փորձը սովորողների ինքնավարության և մոտիվացիայի բարձրացման համար:
- **Ուսուցիչների համագործակցային մշակույթի զարգացում՝** ստեղծել թիմային աշխատանքի **մշտական և կանխատեսելի գործողություն**, որը կդարձնի աշխատանքը ավելի արդյունավետ:
- **Տվյալահեն ղեկավարություն՝** ներդնել տվյալների օգտագործման մեխանիզմներ դպրոցներում:
- **Մշակել բարելավման ծրագրեր՝** հիմնվելով Էստոնիայի մոդելի վրա:

Իրականացման եղանակը.

- Մշակել վերապատրաստման մոդուլներ (մենթորություն, թիմային աշխատանք):
- Կազմակերպել փորձի փոխանակման այցեր և առցանց սեմինարներ:
- Սահմանել պատասխանատուներ;

Ժամկետներ.

- Մինչև 2025-2026 ուսումնական տարվա ավարտ:

Ակնկալվող արդյունքներ.

- Դպրոցներում համագործակցային մշակույթի ձևավորում:
- Ուսուցիչների մասնագիտական զարգացման շարունակական համակարգ:
- Աշակերտների մոտիվացիայի և ինքնուրույն սովորելու կարողությունների բարձրացում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

	Ստորագրող	
Ռուզաննա Պիպոյան	ՌՈՒԶԱՆՆԱ ՊԻՊՈՅԱՆ 5902730325	25.11.2025 թ.

2025-11-25 10:03:34 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից